

## Արձանագրություն 4

2021 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները: Ժողովը վարում էր դասդեկ Լուսինե Ազարյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում.
  - ա) ուսման առաջադիմությունը
  - բ) տարեվերջյան դասագրքի հանձնման արդյունքները
- Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

1. Լսեցին. - 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասդեկ Լ. Ազարյանը՝ իր խոսքում նշելով, որ այս տարին բավականին ծանր էր, սակայն աշակերտները կարողացան հաղթահարել համավարակով պայմանավորված խնդիրներն ու պատվով ավարտել 2020-2021 ուստարին: Դասդեկը մեկ առ մեկ նշեց յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը՝ ծնողներին բաժանելով ամփոփաթերթիկները: Այսպիսով, ամփոփելով 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքները, նա նշեց, որ դասարանում կա երկու գերազանց առաջադիմությամբ աշակերտ՝ Գրիգորյան Անին և Սարգսյան Միլենան:

Հարվածայիններն են՝ Ալեքսանյան Նելլին,  
Բաղայան Սվետլանան,  
Հովհաննիսյան Միլենան,  
Սամսոնյան Տիգրանը,  
Մարկոսյան Գոռը և  
Գալստյան Նարեն:

Դասարանը ցուցաբերել է 100% առաջադիմություն:

Դասդեկ Լ.Ազարյանն ասաց ծնողներին, որ դասարանի բոլոր աշակերտները հանձնել են դասագրքերը լավ վիճակում:

Որոշեցին.-

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու 2020-2021 ուստարում կատարված աշխատանքները: Ուսուցիչների ու դասդեկի աշխատանքը գնահատել գերազանց՝ 100% արդյունավետություն ապահովելու համար:



2. Լսեցին. – Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

Դասդեկ Լուսինե Ազարյանը ներկայացրեց, որ իրեն են դիմել բազմաթիվ ծնողներ տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցով: Դասդեկը երբեք դեմ չի եղել նման միջոցառումներին՝ էքսկուրսիաներին, թատրոն, կինո, մշակույթի օջախներ

այցելություններին: Դրանք հետապնդում են կոնկրետ նպատակներ, նպաստում են աշակերտների ազատ շփմանը, միջանձնային նորմալ հարաբերությունների ձևավորմանը, ֆիզիկական, գեղագիտական և հայրենագիտական գիտելիքների զարգացմանը: Խոսելով էքսկուրսիաների կարևորության մասին՝ Լ. Ազարյանը կարևորեց հատկապես նման միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը՝ էքսկուրսիաները կազմակերպել հուսալի, անվտանգ տրանսպորտային միջոցով: Գումարային խնդիրները պետք է կազմակերպվեն և լուծվեն բացառապես ծնողական խորհուրդների կողմից՝ առաջնորդվելով նվազագույն գումարներով՝ անհրաժեշտ ծախսեր անելու: Դասղեկը և ծնողները պետք է վերահսկեն և համակարգեն էքսկուրսիաներ կազմակերպելու աշխատանքները:

Որոշեցին.- էքսկուրսիա կազմակերպել դեպի Լոռի և իրականացնել՝ առաջնորդվելով բացառապես ծնողների և աշակերտների առաջարկություններով, համաձայնությամբ և մասնակցությամբ:

Ժողովի նախագահ՝  
Քարտուղար՝

 (Վ. Թարոյան)  
 (Լ. Թարոյան)